

ԱՎԱԳՈՒՅՆ  
ՊԱՏՄՎԱԾՔԻ  
ՄԱՏԵՆԱԾՐ

*Իրախիւն Բարդուղիմէ*

ՏԱՔ ԳԵՏԸ

Бриллианты

СУР 9650



Косметический кабинет 1962

Անգլերենից թարգմ.  
Պերե Անյրուեցյան

ЭРСКИН КОЛДУЭЛЛ

ТЕПЛАЯ РЕКА

(На армянском языке)

Армянское государственное издательство

(Айпетрат). Ереван, 1962

## ՏԱՔ ԳԵՏԸ

Աւտուտարորդն արգելակեց գետի վրա կախ-  
ված կամրջի մոտ ու ցույց տվեց դիմացի ամի տու-  
նը: Ես նրան տվեցի քսանհինգ ցենտ, կայարա-  
նից մինչև այստեղ ընկած երկու մղոն տարածու-  
թյան վարձը, և դուրս եկա մեքենայից: Ես շրջվեց  
ու հեռացավ, իսկ ես մնացի մենակ, զով գիշերվա,  
հովտով մեկ ցրված աստղադարդ լույսերի ու լայն,  
կանաչ գետի հետ, որն իր մութ ջրերն էր գլորում  
ներքևում: Շուրջը, սև ամպերի նման, կուտակվել  
էին արդեն գիշերվա կիսախավարով պարուրված  
լեռները, ու միայն բարձր երկնքում փայլփլում  
էին մայրամուտի վերջին ցուրերը:

Կամուրջը ճոճում և օրորվում էր ոտքերիս  
տակ, ստիպելով քայլերս համաշափ դարձնել նրա  
երերումներին: Լայն աղեղով մի ամից մյուսը  
զցված այդ ճոճանակի շարժումներից ետ շմնալու  
հա՛ւար հարկ էր լինում ավելի արագ քայլել: Իմ  
վերջապես, երբ իմ առջև, բոլորովին մոտիկ, սևին  
տվեց լեռան լանջը, որ կտրուկ իջնում էր դեպի

տաք ջուրը, ես ամուր սեղմեցի ուղեպայուսակիս բռնակը և սկսեցի արագ վազել:

Նույնիսկ երբ կամուրջը հետևում մնաց, երբ կոշիկներիս տակ խշխշացին խճաքարերը, ես շկարողացա ազատվել ինձ պատած սարսափից: Յերեկը երևի միանգամայն հանդիստ կանցնեի այդ կամրջով, բայց հիմա այս ուշ գիշերին, այս անձանոթ վայրերում, ուր ամեն կողմից վրա էին տալիս մութ լեռները և ուր լայն, կանաչ գետը հոսում էր ներքևում, ձեռքերս ակամա դողում էին և սիրտս տրոփում էր տազնապով:

Առանց դժվարության գտա այն տունը, որ ինձ ցույց էին տվել, ու ծիծաղեցի, որ խուճապահար էի եղել վախից: Տունը գտնվում էր հենց կամրջի մոտ, և եթե հանկարծ շնկատեի ու անցնեի կողքով, Գրեթհենն ինձ ձայն կտար: Նա նստել էր մուտքի աստիճաններին ու սպասում էր: Երբ լսեցի ինձ կանչող մի ծանոթ ձայն, ամաշեցի, որ վախեցել էի լեռներից ու լայն գետից, որն իր ջրերն էր գլորում ներքևում:

Ճանապարհին թափված խճաքարերի վրայով Գրեթհենը ընդառաջ վազեց:

— Ռիշարդ, սարսափելի էր կամուրջն անցնելը, — հուզված հարցրեց նա, երկու ձեռքով բռնեց ձեռքս և ինձ տուն տարավ:

— Ճիշտն ասած, այո, Գրեթհեն, — պատասխանեցի ես: — Բայց փորձեցի շուտ անցնել:

— Առաջին անգամ բոլորն էլ այդպես են ա-

նում, բայց հետո վարժվում ես և թվում է, թե ձեզ ված ճոպանով ես անցնում: Ես քայլում էի ճոպանի վրայով, երբ փոքր էի, իսկ դու՞, Ռիշարդ, Մենք պարանը ձգում էինք շտեմարանի հատակի վրա ու վարժություններ անում:

— Ես էլ եմ քայլել, բայց դա այնքան վաղուց էր, որ արդեն մոռացել եմ:

Մենք հասանք մուտքին և բարձրացանք աստիճաններով: Գրեթհենն ինձ ուղղակի տարավ դեպի դուռը: Ինչ-որ մեկը լապտերը ձեռքին քայլում էր միջանցքում: Դռան լուսավոր բացվածքի մեջ ես տեսա Գրեթհենի երկու կրտսեր քույրերին: Նրանք կանգնել էին շեմին:

— Քույրս է, էներ, — ասաց Գրեթհենը, — իսկ սա Մերին է:

Ես նրանց բարեկեցի կիսախավարում, և բոլորս միասին մտանք նախասենյակ: Նախասրահում, սեղանի մոտ, կանգնել էր Գրեթհենի հայրը: Նա ձեռքի լապտերը մի կողմ էր պահել, որպեսզի կարողանար տեսնել դեմքս: Մենք առաջ երբեք չէինք հանդիպել:

— Հայրս է, — ասաց Գրեթհենը: — Անհանդըստանում էր, որ մթան մեջ շեռ գտնի մեր տունը:

— Ես ուզում էի վերցնել լապտերը և դիմավորել ձեզ, բայց Գրեթհենն ասաց, որ դուք ինքներդ էլ կգտնեք ճանապարհը: Չմոլորվեցի՞ր: Ինձ համար դժվար չէր կամրջի մոտ լապտերով դիմավորել ձեզ:

Ես սեղմեցի նրա ձեռքը և հավատացրի, որ հեշտութեամբ տեղ հասաւ:

— Աւատուարորդը, որ բերեց ինձ կայարանից, դիմացի ասից ցույց տվեց ձեր տունը: Ամբողջ ճանապարհին ես աշխատում էի տեսողութեանից չկորցնել նրա լույսերը: Եթե դա ինձ չհաջողվեր, երևի այնքան կթափառեի խաղարում, որ կրնկնեի ջուրը:

Իմ վախը նրան ստիպեց ժպտալ:

— Եթե ընկնեիր էլ, սարսափելի չէր լինի: Մեր գետը տաք է: Նույնիսկ ձմռանը, երբ շուրջը ձյուն է ու սառույց, ջրի մեջ տաք է, ինչպես տանը: Այստեղ մենք բալորա էլ սիրում ենք մեր գետը:

— Ո՛չ, ո՛չ Ռիշարդ, դու ոչ մի տեղ էլ չէիր ընկնի: — ասաց Գրեթհենը, ձեռքը դնելով ասիս մեջ: — Ես քեզ հետևում էի այն պահից, երբ դուք եկար մեքենայից և եթե թեկուզ մի սխալ քայլ անեիր, անմիջապես կվազեի:

Ես ուզում էի Գրեթհենին շնորհակալութեան հայտնել այդ խոսքերի համար, բայց նա արդեն մոտեցել էր երկրորդ հարկի աստիճաններին և ինձ էր կանչում: Ուղեպայուսակը ձեռքիս սկսեցի բարձրանալ նրա ետևից: Վերին հարկի միջանցքում, սեղանի վրա, պատրաստ դրված էր կիսավառ մի լապտեր: Գրեթհենը վերցրեց, ու մենք մըտանք տան ճակատին գտնվող սենյակներից մեկը:

Մի պահ լուռ կանգնել, նայում էինք իրար:

— Սափորում թարմ ջուր կա, Ռիշարդ: Եթե

ուրիշ բանի կարիք ունենաս, ասա ինձ: Ես աշխատել եմ ոչինչ շմոռանալ:

— Մի մտահոգվիր, Գրեթհեն, — ասացի ես: — ինձ ուրիշ ոչինչ հարկավոր չէ: Բավական է և այն, որ ես այստեղ եմ, քեզ հետ: Էլ ուրիշ ի՞նչ է պետք ինձ:

Նա մի արագ հայացք նետեց վրաս և իսկույն խոնարհեց գլուխը: Մենք գեո մի քանի րոպե էլ լուռ կանգնել էինք ու շփտեինք ինչի մասին խոսել: Ես ուզում էի նրան ասել, թե ինչքան սրախ եմ, որ թեկուզ միայն մի դիշեր մենք միասին ենք, բայց որոշեցի, որ հետո էլ կհասցնեմ ասել: Գրեթհենը գիտեր, թե ինչու էի եկել:

— Ռիշարդ, ես կսպասեմ ներքևում, մուտքի մոտ: Լապտերը թողնում եմ: Հենց որ քեզ կարգի բերես, իջիր:

Ես գլխի ընկա, որ հարկավոր էր լուսավորել աստիճանները, մինչև որ նա իջներ, բայց արդեն ուշ էր: Երբ լապտերը ձեռքիս վեր թռա տեղիցս ու մոտեցա հարթակին, նա արդեն անհետացել էր:

Վերադարձա սենյակ, փակեցի դուռն ու սկսեցի լվացվել: Խոզանակով և օձառով մաքրեցի դեմքիս ու ձեռքերիս նստած ճանապարհի փոշին: Կախարանից կախված էին կես դյուլին ասեղնագործ սրբիչներ:

Վերցրեցի նրանցից մեկը և սրբեցի երեսս ու ձեռքերս: Հետո սանրվեցի և ուղեպայուսակից հա-

նեցի մաքուր թաշկինակս Աստուծոյ քաղցր զուր և  
ցած իշա Գրեթհենին փնտրելու:

Գրեթհենն ու հայրը սպասում էին մուտքի  
մտա: Տեսնելով ինձ, հայրը ստի կանգնեց և տե-  
ղափոխվեց մյուս աթոռին, ինձ համար տեղ թող-  
նելով մեջտեղում: Գրեթհենն իր աթոռը մոտեցրեց  
և ձեռքը դրեց արմունկիս:

— Ի՞նչարդ, առաջին անգամն եք մեզ մտա,  
լեռներում, — հարցրեց Գրեթհենի հայրը, շրջվելով  
դեպի ինձ:

— Այո, սրբ, երբեք չեմ եղել այս վայրերում:  
Բնությունն այստեղ շատ յուրօրինակ է: Բայց, եթե  
պատահեր, որ ծովափ ընկնեիք, երևի դուք էլ նույն  
քանը կասեիք:

— Բայց չէ՞ որ հայրս նորֆոլկում ապրել է, —  
ասաց Գրեթհենը, — ճիշտ չէ՞ հայրիկ:

— Այո, ես այնտեղ ապրել եմ գրեթե երեք տա-  
րի:

Պարզ երևում էր, որ նա մինչև վերջ շարտա-  
հայտեց իր միտքը, ու մենք սպասում էինք, թե դեռ  
ինչ պիտի ասեր:

— Հայրս մեքենագետ է, — ականջիս շշնջաց  
Գրեթհենը: — Նա աշխատում է երկաթուղային ար-  
հեստանոցում:

— Այո, — կարճ մտորումից հետո շարունակեց  
հայրը: — Ես շատ տեղերում եմ եղել, բայց հիմա  
ուզում եմ հավիտյան այստեղ մնալ:

Ես արդեն պատրաստվում էի հարցնել, թե

հատկապես ի՞նչն էր նրան կապում այս լեռների  
հետ, բայց անմիջապես զգացի, որ նրանք երկու-  
սով, և՛ նա, և՛ Գրեթհենը, հանկարծ տարօրինակ  
ձևով լռեցին: Լռեցի և ես, տարակուսանքով նա-  
յելով նրանց: Քիչ անց նա շարունակեց խոսել,  
բայց արդեն դիմելով ո՛չ ինձ, ո՛չ էլ Գրեթհենին,  
այլ կարծես ինչ-որ երրորդ մարդու, որին ես չէի  
կարող տեսնել մթության մեջ: Անհասկանալի  
հուզմունքով սպասում էի նրա խոսքերին:

Գրեթհենը թեթև, անձայն շարժումով ավելի  
մոտեցրեց իր աթոռը: Ներքևից քարձրանում էր  
գետի տաք գուրշին, ծածկում մեզ, կարծես  
պաշտպանելով գիշերվա զովությունից:

— Երբ Գրեթհենն ու իմ երկու փոքրիկ աղջիկ-  
ները առանց մոր մնացին, — նա խոսում էր հա-  
զիվ լախի, դեպի առաջ կուացած և հեռո՛ւ-հեռո՛ւ,  
լայն, կանաչ գետից այն կողմ նայելով, — երբ  
մենք մենակ մնացինք, ես վերադարձա այստեղ,  
լեռները: Չէի կարող նորֆոլկում մնալ, չէի կարող  
Թալթիմորում ապրել: Սա աշխարհի այն միակ  
անկյունն էր, որտեղ ես հանգստություն գտա:  
Գրեթհենը կարոտում է մորը, բայց ձեզանից ոչ  
մեկը չի հասկանա, թե այս ամենն ինչ է նշանա-  
կում ինձ համար: Նրա մայրն ու ես, երկուսս էլ  
այստեղ ենք ծնվել, լեռներում ու գրեթե քսան տա-  
րի ենք այստեղ ապրել: Հետո, երբ նա հեռացավ  
մեզանից, ես սկսեցի տեղից-տեղ թափառել, խեն-  
թի պես հոսալով, որ կկարողանամ մոռանալ

նրան: Բայց սխարվեցի Այո՞, իհարկե՞, սխարվեցի: Ասող չի կարող մոռանալ իր երեխաների մորը, եթե նույնիսկ գիտե, որ այլևս երբեք չի տեսնելու նրան:

Գրեթէ նեն ալիլի ամուր սեղմվեց ինձ, ու ես չէի կարող հայացքս հեռացնել խավարի մեջ պարզորոշ դժագրված նրա պրոֆիլից: Գեան անձայն թարմվել էր ներքևում, բայց այնտեղից բարձրացող տաք սղն ինձ միշտ հիշեցնում էր նրան:

Գրեթէ նենի հայրը, ձեռքերը ծնկներին հենած, ալիլի կռացավ ու կարծես գետի հեռավոր ափին վեր խոյացող լեռան գագաթի վրա ուշադիր ինչ-որ մեկին էր հետևում: Կիսաբաց դռան արանքից եկող լույսի ճառագայթն ընկավ նրա դեմքին, և անթարթ աչքերը փայլեցին: Արցունքի երկու կաթիլ, աստղի բեկորների պես, սահեցին նրա աչքերից, այրեցին դողացող ձեռքերն ու անհետացան:

Բայց ահա նա օտրի ելավ ու անաչվա պես անունը որևէ բան տրտասանելու ուղղվեց դեպի դուռ: Երբ մի պահ կանգ առավ մուտքի մաս, նրա հսկա սուվերը ծածկեց ինձ ու Գրեթէ նենին: Ես նայեցի նրան, բայց հայացքս սահեց կողքով, իսկ հաջորդ վայրկյանին նա արդեն ներս էր մտել:

Գրեթէ նեն ալիլի ամուր հպվեց ինձ, մատնե-րով սեղմեց ձեռքս ու սկսեց այտով շոշիլ քսա, կարծես ուզում էր ինչ-որ բան մաքրել: Հոր օտնա-

ձայներն աստիճանաբար մարեցին և շուտով անլսելի դարձան:

Հովտում, ինչ-որ տեղ, ճեպընթաց ցնացրու խախտելով գիշերվա անդորրը, շաշիլով ու սուլելով սլանում էր գետի վրայով: Խավարի մեջ բուր-կլտացին բուսավոր պատահանները, որոնց ցու-քերը հյուսիսափայլի լույսերի պես պար եկան լայն, կանաչ գետի վրա, և պողպատե ճանշոցի հեշեղ արձագանքը զլորվելով տարածվեց լեռա-կույտերում:

Գրեթէ նենը զողողացող ձեռքերով սեղմում էր իմ ձեռքը:

— Ռիշարդ, ինչու՞ եկար:

Նրա ձայնը կորավ մետաղյա արձագանքի վեր-ջին հնչյուններում:

Ես շրջվեցի նրա կողմը, կարծելով, որ կհան-դիպեմ Գրեթէ նենի հայացքին, բայց նա ոչ թե ինձ էր նայում, այլ դեպի ինչ-որ տեղ, դեպի հովիտը, որտեղ գետն իր տաք ջրերն էր գլորում: Նա գիտեր թե ինչու էի եկել, բայց ուզում էր ինձանից լսել:

Իսկ հիմա ես չգիտեի, թե ինչու էի եկել: Գրեթէ նենն ինձ դուր էր գալիս, և ես նրան ձգտում էի այնպես, ինչպես երբեք չեմ ձգտել ոչ մի կնոջ: Բայց հիմա, երբ արդեն լսել էի, թե ինչպես էր նրա հայրը խոսում սիրո մասին, ես այլևս չէի կարող ասել, թե սիրում էի նրան: Կսելով, թե նա ինչ-պես էր խոսում Գրեթէ նենի մոր մասին, ես զղջա-ցել էի գալուս համար: Գիտեի, որ Գրեթէ նենը պատ-

բաստ էր հանձնվել, որովհետև սիրում էր ինձ, բայց ես փոխարենը ոչինչ չէի կարող տալ: Նա գեղեցիկ էր, շատ գեղեցիկ, ու ես ձգտում էի նրան: Բայց դա առաջ էր: Իսկ հիմա ես գիտեի, որ սրանից հետո երբեք չեմ կարողանա նրան մոտենալ այն մտադրությամբ, ինչի համար եկել էի այստեղ:

— Ինչու՞ եկար, Ռիչարդ:

— Ինչու՞:

— Այո՞, Ռիչարդ, ինչու՞:

Փակեցի աչքերս, բայց նորից իմ հայացքի առաջ փայլփրում էին հովտի աստղազարդ լույսերը, նորից գգում էի ներքևում հասող գետի տաք բուրմունքը, ու նորից Գրեթհենի մատները հպվում էին ձեռքիս նույն քնքշությամբ:

— Ասա ինձ, Ռիչարդ, աս՛ա, ինչու՞ եկար:

— Չգիտեմ, Գրեթհեն:

— Եթե դու ինձ սիրեիր այնպես, ինչպես ես եմ քեզ սիրում, կիմանայիր:

Նրա մատները դողում էին ձեռքիս մեջ: Ես գիտեի, որ նա ինձ սիրում էր: Հենց սկզբից էլ չէի կասկածել: Գրեթհենը սիրում էր ինձ:

— Գուցե իզուր եկա, — ասացի ես, — այո՞, Գրեթհեն, ես սխալ արեցի: Հարկավոր չէր գալ:

— Բայց չէ՞ որ դու միայն մի գիշերվա համար ես եկել, Ռիչարդ: Վաղը առավոտ շուտ կգնաս: Մի՞թե իսկապես ավստոսում ես, որ եկել ես թեկուզ այդքան կարճ ժամանակով:

— Գրեթհեն, չեմ ավստոսում, որ այստեղ եմ: Բայց հարկավոր չէր գալ: Ես դա արեցի առանց մտածելու: Ես իրավունք չունի այստեղ գալու: Միայն երբ սիրում են միմյանց...

— Բայց, Ռիչարդ, չէ՞ որ դու գոնե մի փոքր սիրում ես ինձ: Դու իմ սիրո կեսի շափ էլ չես կարող ինձ սիրել, բայց ինչու՞ չես ուզում ասել, որ այնուամենայնիվ մի փոքր սիրում ես: Ռիչարդ, այդ դեպքում, քո գնալուց հետո սիրտս ավելի թեթև կլինի:

— Չգիտեմ, — ասացի ես, զղալով, թե ինչպես դողը պատում է ինձ:

Դեռ ավերիս մեջ պահելով նրա ձեռքերը, ես նրան ավելի մոտեցրի ինձ: Եվ հանկարծ կարծես ինչ-որ բան ծնվեց իմ մեջ, ու ցավ պատճառելու շափ ակնթարթային պարզությամբ խոցեց ինձ: Կարծես այն, ինչի մասին խոսում էր Գրեթհենի հայրը, իմ առաջ բացվեց իր ամբողջ էությամբ: Ես առաջ երբեք չէի մտածել, որ գոյություն ունի այդպիսի սեր: Ինձ թվում էր, որ տղամարդը չի կարող այնպես սիրել, ինչպես կինը տղամարդուն: Բայց հիմա հասկացա, որ դա ճիշտ չէր:

Մենք երկար նստել էինք լուռ, իրար ձեռք բռնած: Տեսնելով, թե ինչպես էին հովտի լույսերը հանգչում մեկը մյուսի հովից, կարելի էր կռահել, որ արդեն կեսգիշերն անց է: Բայց ժամանակը կապ չունի մեզ հետ:

Գրեթհենը հպվում էր ինձ, մեկ աչքերիս մեջ



նայելով, մեկ գլուխն ուսիս գրած: Նա իմն էր բա-  
ռիս բուն իմաստով, բայց ես արդեն չէի կարող  
չարաշահել նրա զգացմունքները ու հետո հեռա-  
նալ, իմանալով, որ ես նրան շեմ սիրում այնպես,  
ինչպես ինքն ինձ: Ըանապարհին այդպիսի բան  
չէր անցնում մտքովս: Ես այս ամբողջ երկար տա-  
րածութունը կտրել էի միայն նրա համար, որպես-  
զի մի ժամ Գրեթհենին գրկիս մեջ պահեմ, իսկ հե-  
տո հեռանամ ու մոռանամ, գուցե և հավիտյան:

Ժամանակն էր տուն մտնելու: Ոտքի ելա ու  
գրկեցի Գրեթհենին: Նա դողում էր իմ մարմնի  
հպումից, բայց հետո ինքն էր ամուր փարվում:  
Նրա սիրտը խփում էր անշափ մոտիկ ու կարծես  
ամեն տրոփյունից: Հետո նրա փոքրիկ կրծքերը  
խոցում էին ինձ:

— Ռիչարդ, համբուրիր հրածեղտից առաջ, —  
ասաց նա:

Հետո վազեց դեպի դուռն ու բացեց իմ առջև:  
Սեղանից վերցրեց լապտերը և առաջինն սկսեց  
բարձրանալ վեր տանող աստիճաններով: Նա  
սպասեց իմ սենյակի դռան մոտ, մինչև վառեցի  
երկրորդ լամպը: Իսկ մյուսն իր հետ վերցրեց:

— Բարի գիշեր, Գրեթհեն: — ասացի ես:

— Բարի գիշեր, Ռիչարդ:

Ես իջեցրի լապտերի պատրույզը, որպեսզի  
ապակին չծածկվեր մրով, ու նա միջանցքով գնաց  
դեպի իր սենյակը:

— Ռիչարդ, առավոտյան կարթնացնեմ քեզ,  
որպեսզի գնացքից շուշանաս:

— Ենորհակալութուն, Գրեթհեն, Միայն թե  
շուտ արթնացրու, որովհետև գնացքը յոթն անց  
կեսին է շարժվում:

— Ճիշտ ժամանակին կարթնացնեմ, — ասաց  
նա:

Դուռը փակվեց: Երջվեցի և վերադարձա իմ  
սենյակը: Փակեցի դուռն ու սկսեցի դանդաղ հան-  
վել: Հետո հանդցրի լապտերն ու անկողին մտա,  
բայց բունս չէր տանում: Համոզվելով, որ շեմ  
կարողանալու քնել, նստեցի մահճակալին ու ծխե-  
ցի: Մխում էի իրար կտևից, ծուփը փչելով վարա-  
գույրից վեր, որն իմ մահճակալը բաժանում էր  
լուսամուտից: Տանը լռութուն էր տիրում: Լինում  
էին պահեր, երբ թվում էր, թե միջանցքի մյուս  
կողմից, Գրեթհենի սենյակից, ականջիս է հասնում  
ինչ-որ խուլ խշխշոց, բայց գուցե միայն թվում էր:

Չեմ հիշում, այսպես անշարժ ու լարված որքան  
նստեցի մահճակալի ծայրին, մտածելով Գրեթհենի  
մասին, բայց հանկարծ ոտքի ցատկեցի: Բացեցի  
դուռը, վազեցի միջանցք ու կանգնեցի Գրեթհենի  
սենյակի դռան առջև: Դուռը փակ էր, բայց կողպ-  
ված չէր, վստահ էի դրանում, ու ես անձայն  
պատեցի բռնակը:

Դռան արանքից ձգվել էր լույսի բարակ մի  
շերտ: Հարկ չկար դուռն ավելի լայն բացելու, որով-  
հետև ես անմիջապես Գրեթհենին տեսա անշափ

մտախի, ինձնից երկու քայլ այն կողմ: Մի պահ կկոցեցի աչքերս, փորձելով այնպես մտածել նրա մասին, ինչպես ամբողջ օրը մտածել էի գնացքում, որը սլանալով ծովափից ինձ բերում էր այստեղ: Գրեթե՛հենը շտեց, թե ինչպես պտտվեց դռան բռնակը: Չէր կասկածում, որ ես կանգնել եմ շեմին: Սեղանի վրա ամբողջ ուժով վառվում էր լապտերը:

Ես համոզված էի, որ Գրեթե՛հենին անկողնում կտեսնեմ, և չէի կասկածում, որ նա արդեն քնել է: Բայց նա չէր քնել: Ծնկաշոք կանգնել էր մահճակալի առջև դրված փոքրիկ գորգին, գլուխը հենել էր խաշածեած ձեռքերին ու ամբողջ մարմնով ցնցվում էր հեկեկոցներից: Կապույտ ժապավենով հավաքված նրա մազերը թափվել էին տեսերին: Նա հագել էր բաց վզով, նուրբ ժանյակներով երիզված մետաքսե սպիտակ գիշերազգեստ:

Ես միշտ գիտեի, որ նա գեղեցիկ է, բայց երբ նրան տեսա դռան բացվածքից, նա ինձ առավել գեղեցիկ թվաց: Ես երբեք չէի հանդիպել ավելի գեղեցիկ աղջկա:

Նա դեռ ոչինչ չէր լսել, և չէր գուշակում, որ ես այստեղ եմ, դռան ետևում: Նա ծնկաշոք կանգնել էր մահճակալի մոտ, ձեռքերը կրծքին սեղմել ու լաց էր լինում:

Քիչ առաջ, կիսով չափ բանալով դուռը, ինքս էլ չգիտեի, թե ինչ էր լինելու հետո: Բայց հիմա, երբ տեսա, թե նա ինչպես էր ծնկաշոք կանգնել

մահճակալի մոտ, շկասկածելով, որ ես նայում էի նրան և լսում նրա հեկեկոցն ու աղոթքը, հանկարծ շատ պարզ զգացի՝ աշխարհում, նրանից քացի, ոչ ոք այդքան թանկ չէր ինձ համար: Եվ հասկացա այն, ինչ չէի հասկացել մինչև այս պահը. ես սիրում էի նրան:

Լուռ փակեցի դուռը և վերադարձա իմ սենյակը: Մթության մեջ փնտրեցի բազկաթոռը, մոտեցրի լուսամուտին ու նստեցի, սպասելով արևածագին: Երկար նստեցի այդպես, նայելով լուսամուտից երևացող խավար հովտին, որի հատակին իր ջրերն էր գլորում տաք գետը: Որքան աչքերս վարժվում էին մթությանը, գետն այնքան դառնում էր մոտիկ ու մոտիկ, և թվում էր, որ բավական է երկարել ձեռքը ու մատներս կսուզվեն նրա տաք ջրերի մեջ:

Լուսաբացին Գրեթե՛հենի սենյակից ականջիս հասավ ինչ-որ խշխշոց, կարծես մեկը թեթև քայլերով մի լուսամուտից մյուսն էր գնում: Նույնիսկ մի անգամ, միջանցքում, դռների մոտ, ինչ-որ սոնաձայն լսեցի:

Երբ լիռան գագաթից երևաց արեգակը, ես վեր կացա ու սկսեցի հագնվել: Իսկ դրանից անմիջապես հետո լսեցի, թե ինչպես Գրեթե՛հենը դուրս եկավ իր սենյակից և ցած վազեց աստիճաններով: Կռահեցի, որ նա վազեց ինձ համար նախաճաշ պատրաստելու, որպեսզի քաղցած չգնայի կայարան: Քառորդ ժամ անց աստիճանների վրա նորից

լսեցի նրա ստնաձայնը: Հետո դուռն զգուշ բախեցին, և ծանոթ մի ձայն մի քանի անգամ իմ անունը տվեց:

Բաց արեցի դուռը և իմ առջև տեսա Գրեթհենին: Իմ հայտնալիլը շատ զարմացրեց նրան, երևի կարծում էր, թե դեռ խոր քնի մեջ եմ: Եվ նա նույնիսկ չկարողացավ միանգամից խոսելու բան գտնել:

— Գրեթհեն, — ասացի ես, բռնելով նրա ձեռքը, — մի շտապիր ինձ ուղեկցելու, ես այսօր ոչ մի տեղ էլ չեմ գնա: Ես էլ չգիտեմ, թե ինչ պատահեց երեկ երեկոյան: Գիտեմ միայն մի բան, որ սիրում եմ քեզ:

— Բայց, Ռիչարդ, չէ՞ որ երեկ դու ասում էիր...

— Այո՞, երեկ ասացի, որ այսօր առավոտ վաղ կգնամ, բայց Գրեթհեն, ինքս էլ չգիտեի, թե ինչ էի ասում: Առանց քեզ ես այստեղից ոչ մի տեղ չեմ գնա: Ես նախաճաշից հետո ամեն ինչ կբացատրեմ: Բայց նախ և առաջ ուզում եմ, որ ինձ ցույց տաս գետը տանող ճանապարհը: Ես հենց հիմա պետք է իջնեմ այնտեղ, դեպի գետը, և ձեռքերս սուղեմ նրա ջրերի մեջ:

## Տ Ո Ն Ա Վ Ա Ճ Ա Յ

Բեսն այլևս ուժ չունի համբերելու նա դուրս եկավ տոնավաճառի կրպակից և պարանոցների, ցցերի և արկղերի արանքներում սայթաքելով, հասավ իրենց վրանը: Հեջին ասաց, որ սանրվելու է, շնայած դիտեր, որ ամուսինն իրենից լավ էր հասկանում, թե բանն ինչու՞մն է:

Բեսը լաց չէր լինում: Արդեն մի տարի է, ինչ նա լաց չէր լինում: Հեջի հետ երկու տարի էր ապրել, մի տոնավաճառից մյուսը քարշ տալով իրենց հրաձգարանը, ուր ամբոխին առաջարկում էին խփել խաղալիքի շնիկներին: Գրեթե մի տարի էր անցել, ինչ նա վերջին անգամ լաց եղավ: Մանր շնչելով, նա սլառկեց մահճակալին:

Տոնավաճառի աններդաշնակ աղմուկ-աղաղակի մեջ երբեմն նրա ականջին էր հասնում Հեջի ձայնը: Ինչպիսի ճիշ էլ հնչեր «ծիծաղի սենյակում», ինչքան էլ Կուրաչական փոքրիկ ռեստորանի երաժշտական արկղիկն ականջ ծակեր և խոսափողով ուժեղացրած խոսքու կանչերը ներս հրա-

վիրեին, միևնույն է, Բեսը միշտ կարողանում էր տարբերել Հեջի ծանոթ, երգահնչուն ձայնը:

— Խփեցեք շնիկներին, հարգելիներս, տուն տարեք արծաթե նոր դուլարը:

Նա ինքն էլ այնքան էր կրկնել այդ նույն բաները, որ թվում էր, թե Հեջի ձայնը դուրս էր գալիս հենց իր սեփական կոկորդից:

Ամբոխի ոտքերից բարձրացող փռչին նստում էր Բեսի դեմքին ու ձեռքերին: Նա պառկել էր լարված ու ձգված, և աղմուկը, տոթը, աներես լույսը, ծանր վերմակի նման ճնշում էին նրան:

— Խփեցեք շնիկներին, հարգելիներս, տուն տարեք արծաթե նոր դուլարը:

Մեքենայի պես նորից հնչեց Հեջի ձայնը: Բեսն անշարժացել էր մահճակալի վրա: Հեջը խոսում էր այն կնոջ հետ, որն արդեն կես ժամ է, ինչ կանգնել էր տոնավաճառի կրպակի առաջ ու հենվել բազրիքին: Հեջի ձայնը միշտ փոխվում էր, երբ նա փորձում էր միանգամից երկու գործ անել: Բեսը լավ գիտեր, թե նա ինչի էր ձգտում: Հեջը ժամադրութուն էր նշանակում այս կնոջը: Երբ պայմանավորվեն, նա կանհետանա, կանհետանա նաև կինը, և Բեսը Հեջին չի տեսնի մինչև մյուս առավոտ: Վերջին երկու տարիներին այդ բանն այնքան էր կրկնվել, որ նա արդեն կորցրել էր հաշիվը:

Բեսը կողքի շրջվեց, որպեսզի շտեմնի գլխավոր ծառուղուց եկող լապտերի լույսը, որ թափանցում էր վրանի նուրբ կտավի միջով: Նա նույնիսկ չգի-

տեր, թե ինչ էր այս քաղաքի անունը: Կարծես էմպորիա էր, կամ Զոստորիա, կամ Պեորիա, կամ էլի ինչ-որ նման մի բան: Բիրմինգհեմից արևմուտք ընկած հարավային մի քաղաք, դրանից քաջի նա ուրիշ ոչինչ չգիտեր: Այն օրվանից, ինչ Հեջը սովորութուն էր դարձրել շարաթը մի քանի անգամ ինչ-որ կնոջ հետ անհետանալ, Բեսի համար թուրք քաղաքները միանման էին դարձել:

Բեսը վեր կացավ, սանրվեց, մաքրեց հագուստի փռչին: Հենց այդ պահին լսեց, որ Հեջը կանչում էր իրեն: Նա դուրս եկավ վրանից և ուղղվեց դեպի կրպակը:

— Խփեցեք շնիկներին, տուն տարեք արծաթե նոր դուլարը, — ասում էր Հեջը, մինչ Բեսը կոացած անցնում էր բազրիքի տակով: Նա շրջվեց և աչքով արեց նրան: — Խփեցեք շնիկներին, հարգելիներս: Միայն տասը ցենտ:

Դեռ Հեջին շտեսած, Բեսը նկատեց կնոջը: Հենց այն նույն կինն էր, որ հենվել էր բազրիքին ու խոսում էր Հեջի հետ: Երբ Բեսը հեռացել էր կրպակից:

— Ի՞նչ կասես Բես, — սկսեց Հեջը:

Բեսը ոտքից գլուխ գննեց կնոջը: Գեղեցիկ չէր, բաց գույնի թափթիփված մազերով: Երբնք արդեն վաղուց լվացվելու կարիք ունեին: Քսան տարեկան էր, ոչ ավելի, բայց ձեռքերը կոշտացել էին աշխատանքից և այնքան էլ մաքուր չէին:

— Սա՞ է, — բուր գեմքով հարցրեց Բեսը:

— Եվ ի՞նչ, — բայտ երևուցի՞ն վերալորված  
ասաց նա:

— Հեջ, գնալով ավելի ես կորցնում ճաշակդ:

— Դե լավ, Բես, եկ շվիճենք, — ասաց Հեջը և  
նյարդաչին շարժումներով սկսեց շոյել նրա ուտերն  
ու մեջքը:

Նա կռացավ, անցավ բազրիքի տակից և ան-  
հետացավ կրպակի ետևում:

Դես ու դեն թափառող ամբոխը փոշու ամպեր  
էր հանում, ու լապտերի լույսի տակ թվում էր, որ  
խիտ, դեղին մառախուղ էր քույա-քույա բարձրա-  
նում: Բեսն զգում էր, թե ինչպես փոշին ու մանր  
ավազահատիկները նստում էին դեմքին ու ձեռքե-  
րին: Նա զզվանքով թափ տվեց զգեստը:

Կինը մի երկու անգամ վախվախելով նայեց նրան  
և լուռ քաշվեց ամբոխի կողմը: Հետո հանկարծ  
շրջվեց, ճանապարհ բաց արեց դեպի կրպակի  
էջն ու անհետացավ տեսողութունից:

Ազատված բազրիքի մոտ խցկվեց կանանց ու  
տղամարդկանց մի խումբ: Նրանք անթարթ աչքե-  
րով նայում էին Բեսին, կարծես նա գլխավոր ծա-  
ռուղու ատրակցիոններից մեկը լիներ:

— Այստեղ ինչպե՞ս են զվարճանում, — բարձ-  
րաձայն հարցրեց տղամարդկանցից մեկը:

Բեսը նայում էր իրեն ուղղված դեմքերին: Բո-  
լորն էլ նման էին Հեջին ու այն կնոջը:

Մեքենաբար ասի մեջ վերցնելով իրենց դարձ  
ապրած փայտե երեք գնդիկ, նա մեկնեց ձեռքը:

— Խփեցեք շնիկներին, հարգելիներս, տուն  
տարեք արծաթե նոր դուլարը:

— Այ, դա ես հասկանում եմ, — տասը ցին-  
տանոց թղթադրամ տալով, ասաց տղամարդկան-  
ցից մեկը:

Նա նետեց գնդիկները բայց կպավ երեք շնիկ-  
ներից միայն երկուսին: Եվ պատրաստվեց հե-  
ռանալ:

— Մի բուպե, միստր, — կանչեց Բեսը, — ես  
ձեզ ավելի լավ բան կառաջարկեմ:

Տղամարդը վերադարձավ:

— Էլ փող չեմ տա այսպիսի խաղի համար, —  
զլուխը շարժելով ասաց նա: — Դուք այնպես եք  
ամբացնում այդ շնիկներին, որ եթե կպչի էլ չեն  
ընկնում:

Բեսը հենվեց բազրիքին:

— Միստր, եկեք գործարքի մեջ մտնենք:  
Առիթը բաց մի թողեք: Ուզում եք, ես ձեզ հիմա  
տասը գնդիկ կտամ: Եթե երեք շներին էլ դցեք,  
ամբողջ կրպակը թող ձերը լինի: Դե ինչ կասեք,  
ձեռնտու՝ առաջարկութուն է:

Տղամարդը վերցրեց գնդիկները և սկսեց զցել  
շնիկների վրա: Երեքն էլ ընկան:

— Ահա և հաղթեցիք, — գոչեց Բեսը, դուրս  
գալով բազրիքի ետևից: — Հիմա բուլորը ձերն է:  
Մաեք, դուք եք տերը:

Ու մի պահ անց, ինչքան ուժ ունեք, նա ար-  
ժունկներով ճանապարհ բացեց և խառնվեց ամ-

բոխին: Գետնից բարձրացող փռչին շուտով կու-  
րացրեց նրան, ու դեռ գլխավոր ծառուղու վերջը  
չհասած, թեւք մուրվեց: Գուրս գալով ամբոխի  
միջից, նա անցավ ինչ-որ դատարկ տարածութուն  
և սկսեց քայլել մի փողոցով որն, ըստ երևույթին,  
քաղաքից դուրս էր տանում: Նրա համար միևնույն  
էր ուր գնալ, միայն թե՛ հեռու այդ էմպորիայից,  
Ֆոստորիայից, Պեորիայից կամ ինչպես էլ որ  
կոչվեր այն:

## ԱՎՏՈՄՈՐԻԼԸ ՇԱՐԺԻՉ ՉՈՒՆԻ

Մեկն ավելի հարմար տեղավորվեց ավտոմո-  
բիլի վերջին նստարանին, իր շան մոտ: Ու սկսեց  
բանջո նվագել: Սայնեն նստել էր Փենքսթոթ պան-  
դոկի նախամուտքի ճոճաթոռին ու լսում էր Մելի  
նվագը: Ամառ էր, և արևը կրակ էր թափում: Թվում  
էր, որ երեկոյան կպայթի արևմուտքից արշավող  
ամպրոպը: Երբեմն ուժեղ քամի էր փչում բարձ-  
րացնելով փռու բուլաներ, որոնք նման էին դե-  
ղին օդապարիկների:

Մեկն ամռանն աշխատում էր կոճի ֆարրիկա-  
յում, բայց չէր սիրում ամբողջ տարին աշխատել:  
Չմոռանր դնում էր անուրառ և վերադառնում միայն  
ամռանը: Նա սիրում էր ամառն անցկացնել իր  
հյուղակույսում, շան հետ, և բանջո նվագել պանդոկի  
մուտքի առջև, որտեղ նստում էր Սայնեն:

Մելը ծնգծնգացնում էր բանջոն: Սայնեն  
նստել էր մոտքի մոտ և ավելի արագ էր ճոճվում:

Փլանֆեթի փլանֆ... Փլանֆեթի փլանֆ... Փլան-  
ֆեթի պլինգ...

Մեզ, այդ անիծյալ շվեդացին, ինչպես նրան  
անվանում էին տերերը, լավ փայտահատ էր: Բայց  
կոճի ֆարրիկայում վատ էր աշխատում: Չէր սիրում  
ամռանը ֆարրիկայում աշխատել: Ֆարրի-  
կան էլեկտրական լարերի համար կոճեր էր արտա-  
դրում: ու հիմա Մեզը պետք է այնտեղ լիներ, և  
մինչ ձուլակոճերը հասնեին խառատի դազդահին,  
նա պետք է տաշեր դրանք: Բայց Մեզը չէր սիրում  
ամբողջ տարին աշխատել:

Սայնեն Փենրոքոթ պանդոկի տիրուհին էր: Գա-  
փայտահատների պանդոկն էր: Նրանք այնտեղ  
էին մնում, երբ քաղաք էին գալիս անտառում  
վաստակած իրենց փողերը ծախսելու: Սայնեն  
օգնականներ չէր պահում: Ասենք, օգնական պետք  
էլ չէր նրան:

Փլանեթի փլանե... Փլանեթի փլանե... Փլանե-  
թի փլանե...

Մեզը բանջո էր նվագում Սայնեի համար:  
Նրանք իրար հետ երբեք չէին խոսում: Մեզն այն-  
քան հազվադեպ էր շարժում լեզուն, որ կարող էր  
նույն հաջողությամբ համր ծնվել: Կարելի էր նրա  
հետ մի ամբողջ ժամ նստել և այդպես էլ ոչ մի  
բառ չլսել:

Սայնեն խոհանոց մտավ և ոսկոր բերեց Մեզի  
շան համար: Մեզը բաց արեց ավտոմոբիլի դռնա-  
կը, շունը հարձակվեց ոսկորի վրա, հետո ետ ցատ-  
կեց, կծկվեց Մեզի կողքին ու սկսեց կրծոտել: Մե-  
զը շարունակում էր նվագել Սայնեի համար:

Փլանեթի փլանե... փլանեթի փլանե... փլանե-  
թի փլանե...

Ժամի հինգին Սայնեն տուն մտավ ընթրիք  
պատրաստելու: Մեզը բանջոն նստարանին դրեց,  
մեքենայից դուրս քշեց շանը, ինքն էլ վեր կացավ  
տեղից և ավտոմոբիլը հրեց մինչև իր խրճիթի մոտ  
գտնվող ցախատունը: Ավտոմոբիլը շարժիչ շուներ:  
Դեռ ձմռանը, երբ Մեզն աշխատում էր անտառում,  
ինչ-որ մեկը ցախատուն էր մտել ու գողացել շար-  
ժիլը: Գարնանը, երբ Մեզը քաղաք վերադարձավ,  
այն եց ինքը ավտոմոբիլը մինչև պանդոկ հրել, որ-  
տեղ բանջո էր նվագում Սայնեի համար: Եվ շու-  
տով դա սովորություն դարձավ:

Մեզն ավտոմոբիլը հրեց մինչև ցախատուն:  
Այնտեղ նրան սպասում էր տերը: Սկոթը Մեզը  
տանել չէր կարող նրան:

— Հելլո, Մեզ, — ասաց Սկոթը, — հաճելի նո-  
րություն ունեմ:

— Չեմ ուզում ձեր նորությունները լսել:

Մեզը գիտեր, որ եթե Սկոթը հայտնվում էր նրա  
խրճիթի մոտ, ուրեմն ուզում էր նրան աշխատանքի  
կանչել: Անտառում չէին սիրում Սկոթին:

— Հավաքիր ունեցած-շունեցածդ, Մեզ: Վաղը  
առավոտ ժամը շորսին անտառ ենք գնում:

— Ձեր անտառն էլ կորչի, դուք էլ, ձեր անիծ-  
յալ կոճերն էլ, — գոռաց Մեզը, շրխկացնելով հյուս-  
դակի դուռը:

Համբերությունից դուրս բերել՝ ահա այն մի-

բոխին: Գեանից բարձրացող փոշին շուտով կու-  
րացրեց նրան, ու դեռ գլխավոր ծառուղու վերջը  
չհասած, թեք մոլորվեց: Դուրս գալով ամբոխի  
միջից, նա անցավ ինչ-որ դատարկ տարածութուն  
և սկսեց բայլել մի փողոցով որն, ըստ երևույթին,  
քաղաքից դուրս էր տանում: Նրա համար միևնույն  
էր ուր գնալ, միայն թե՛ հեռու այդ էմպորիայից,  
Ցոստորիայից, Պեորիայից կամ ինչպես էլ որ  
կոչվեր այն:

## ԱՎՏՈՄՈՒԹԻԼԸ ՇԱՐԺԻՉ ՉՈՒՆԻ

Մեզն ավելի հարմար տեղավորվեց ավտոմո-  
բիլի վերջին նստարանին, իր շան մոտ. ու սկսեց  
բանջո նվագել: Սայնեն նստել էր Փենքսթոթ պան-  
դոկի նախամուտքի ճոճաթոռին ու լսում էր Մելի  
նվագը: Ամառ էր, և արևը կրակ էր թափում: Թվում  
էր, որ երեկոյան կպայթի արևմուտքից արշավող  
ամպրոպը: Ծրբեմն ուժեղ քամի էր փչում բարձ-  
րացնելով փոշու քուլաներ, որոնք նման էին դե-  
ղին օդապարիկների:

Մեզն ամռանն աշխատում էր կոճի ֆարրիկա-  
յում, բայց շէր սիրում ամբողջ տարին աշխատել:  
Չմռանը դնում էր անուռ և վերադառնում միայն  
ամռանը: Նա սիրում էր ամառն անցկացնել իր  
հյուղակում, շան հետ, և բանջո նվագել պանդոկի  
մուտքի առջև, որտեղ նստում էր Սայնեն:

Մելը ծնգծնգացնում էր բանջոն: Սայնեն  
նստել էր մոտքի մոտ և ավելի արագ էր ճոճվում:

Փլանֆեթի փլանֆ... Փլանֆեթի փլանֆ... Փլան-  
ֆեթի պլինգ...



ակ միջոցը, որով կարելի էր Մելին խոսեցնել: Բայց վտանգավոր էր նրան զայրացնելը: Նա այս շրջանից համարյա տասերորդ տիրոջն էր վոնդել: Նրանք կանադա էին փախել ավելի շուտ, քան Մելը հասցրել էր դաս տալ նրանց:

Սկոթը հեռացավ և ոչ մի անգամ ետ չնայեց: Սկոթը վախկոտներից չէր:

Մելը խրճիթ մտավ և ամբողջ ուժով փակեց դուռը: Շունը պառկել էր սեղանի տակ և ընթրիքի էր սպասում: Անտառում լավ էին ճանաչում Մել Անդերսոնին: Հենց թեկուզ նրա համար, որ Ռենջելից մինչև Քարիբուի, ոչ մեկը նրանից լավ բանջո չէր նվագում: Եվ այս շրջանի լավագույն փայտահատն էր: Նա այնքան վստահ էր իր ուժերին, որ ցիցը խփում էր հենց այնտեղ, որտեղ ընկնելու էր ծառը: Եվ իսկապես, ծառն ընկնում էր ու ցիցը մինչև վերջ հողի մեջ խրում: Նա վերցնում էր երկու կացին և աշխատանքի գնում, ու երբ կացիներից մեկը շատ էր տաքանում, Մելը մի կողմ էր գնում ու վերցնում մյուսը: Տվեք որևէ փայտահատի նույն սղոցը, նույն կացիներ կամ ինչ էլ որ ուզեք, միևնույնն է, Մելը կարողանում էր ծառն ավելի շուտ տապալել: Ահա թե ինչու Մելին ամեն շաբաթ ութ աշխատանքային օրվա փող էին վճարում, մինչդեռ ուրիշներին՝ միայն վեց:

Հիմա ամառ էր, և մինչև ձմեռ Մելը չէր ուզում անտառ գնալ: Ամռանը նա սիրում էր թրև գալ քաղաքում և Փենքսթոթ պանդոկի մուտքի մոտ

բանջո նվագել: Բայց կոճի Ֆարրիկայում ձուլակոճղերի պակասութուն կար, և Մելն ստիպված եղավ անտառ գնալ: Ա՛յ թե աշխատելու ժամանակ էին գտել:

Լուսադեմին Մելը փայտահատների խմբի հետ ուղղվեց դեպի անտառ, և հաջորդ օրն արդեն սկսեց ծառեր կտրել ձուլակոճղերի համար: Բանջոն ու շանը տանն էր թողել:

Խումբն անտառում երեք շաբաթ աշխատեց: Եվ ահա դժգոհութուն բարձրացավ: Երբ բանվորները քաղաքից եկան, Սկոթը խոստացավ երկու շաբաթից արձակել բոլորին: Երրորդ շաբաթվա վերջին Մելը զայրացավ: Երևում էր, որ Սկոթը որոշել էր մի ամբողջ ամսով հետաձգել նրանց արձակումը: Եվ շորրորդ շաբաթից սկսած, Սկոթն ստիպված էր աշարուրջ լինել: Նա ստիպված էր զրուշանալ, որպեսզի հանկարծ ինչ-որ բան շաբաթեր գլխին: Նրան կարող էին ճզմել ծառի տակ:

— Եկեք այդ շան որդուն գետը գցենք, — առաջարկեց փայտահատներից մեկը:

— Կապենք ծառին, թող լուսանները խժռեն, — առաց մի ուրիշը: — Միևնույն է, այդ անզգամին չես խեղդի: Նա գորտի պես լողալ գիտե:

— Թող Մելը նրան ծառով ճզմի, — առաց Անդերսոնը, խմբի ավագը: — զբաղվիր դրանով, Մել:

Մելը լուռ պագել էր:

Բավական խելամիտ էր Սկոթը և ամեն երեկո,

ընթրիքից հետո, մտնում էր իր փայտե տնակն ու մինչև լույս ոչ մեկի աչքին չէր երևում: Միության մեջ նրան կարող էին հինգ բռպեում սպանել, և նա գիտեր դա:

Բայց ահա վեց շաբաթ անցավ, և Սկոթն իրեն առաջվա պես լավ էր զգում: Աշխատանքի ժամանակ նա աշալուրջ էր, իսկ երբ վրա էր հասնում մութը, քիթը դուրս չէր հանում փայտե տնակից:

Այդ ժամանակ խմբից երկու հոգի որոշեցին փախչել, թեկուզ Սկոթի պես տասը տեր էլ տուննային: Նրանք ոչ ոքի ոչինչ չասացին և պատրաստվում էին փախչել: Երբ նրանք իջան գետը, Սկոթը ճաշից առաջ լվացվում էր իր տնակում:

Մի քանի բռպե անց, երբ ճաշի նստեցին, Սկոթը նկատեց նրանց բացակայությունը: Նա կանչեց Մելին և մի ուրիշ փայտահատի, ու բոլորը նետվեցին գետի գետը: Փախստականներն արդեն կես մղոն նավարկել էին հոսանքի ուղղությամբ և կատաղի թիավարում էին: Նրանք կանգնել, անընդհատ նաչում էին ջրին, որպեսզի չբախվեն ստորջրյա քարերի: Նրանց ձեռքերն ու թիակները պտտվում էին այնպես, ինչպես հողմաղացի թևը փոթորկի ժամանակ:

— Մել, անմիջապես նավակ նստիր, հետո էլ օգնական վերցրու և քարշ տուր այդ անիծյալ կանաղացիներին, — գոռում էր Սկոթը: Հայհոյելով և գետափին ետ ու առաջ վազելով:

Մելը դիտով ուշան արևից իր կողքին կանգնած

փայտահատին, ու նրանք լուռ հրեցին նավակը: Մելը ճամբարի ամենաուժեղ և ամենահաղթանգամ փայտահատն էր: Մյուսը նրան պետք է օգներ թիավարելու:

Առաջին երկու-երեք մղոնը գետը շրջադարձ շուներ: Գարնանն ու ամռանը նրա վրայով գերաններ էին լողում կոճի ֆարրիկայի համար: Զմռանը գետը երեք-չորս ոտնաչափ խորությամբ սառում էր, և երբ փայտահատները հեռանում էին անտառից ու տուն վերադառնում, ստիպված էին լինում սառույցով անցնել:

Սկոթը բանվորներից մեկին ճամբար ուղարկեց հեռադիտակը բերելու:

Մելը և մյուս փայտահատը գնում էին փախստականների հետքերով: Երկու նավակում էլ թիավարում էին մոլեգնորեն: Մելի նավակը սլանում էր անհավատալի սրագությամբ: Պարզ երեվում էր, որ հենց առաջին մղոնին նա կհասներ փախստականներին: Մելը և նավախելին կանգնած նրա ընկերը ծունկ շոքեցին, որպեսզի ավելի մոտ լինեն ջրին: Նավը սլանում էր գետի ուղղությամբ, իր ետևից թողնելով սպիտակ փրփուրի հետքեր, որոնք տարածվում էին երկու կողմում: Փտած արմատների հոտ էր դալիս արևելքով ջրից:

Բանվորը վաղևույթ եկավ ճամբարից և Սկոթի համար հեռադիտակ բերեց:

— Ես ցույց կտամ այդ անիծյալ կանաղացի-

ներին, թե ինչ է նշանակում աշխատանքից փախ-  
չել. — գոռում էր Սկոթը, հեռագիտակը վերցնելով  
նրա ձեռքից:

Երկու նավակները հիմա հազիվ տասներկու  
կորպուս հեռավորության վրա էին գտնվում իրա-  
րից: Թիերի ամեն մի թափից հետո Մելի նավա-  
կը մոտենում էր: Սկոթը հեռագիտակն աչքերին  
տարավ ու առանց կտրվելու սկսեց նայել: Փայտա-  
հատները խոնավեցին ափին և ամբողջապես ուշա-  
դրույուն դարձած նայում էին, սպասելով, որ Մե-  
լը կհասնի փախստականներին: Արժեք դիտել աչդ  
տեսարանը: Հավանաբար, նա նրանց գլուխները  
կսուզի ջրի մեջ և կպահի այնպես, որ երկուսի  
շունչն էլ բուրբուխ կտրվի, իսկ հետո կբաշի դեպի  
իր նավակը և կհանձնի Սկոթին: Իսկ Սկոթն արդեն  
աշխատանք էր հնարել նրանց համար, որպեսզի  
բուրբ հիմար մտքերը դուրս թռչեն փայտահատ-  
ների գլխից:

Մելի նավակն արդեն բուրբուխն մոտեցել էր  
առաջինին: Փախստականները թիավարում էին  
ամբողջ ուժով, բայց Մելը թիավարում էր է՛լ ավե-  
լի արագ: Հաջորդ վայրկյանին նավակները հավա-  
սարվեցին, նրանց բաժանում էր հազիվ մի թիակ  
տարածություն: Եվ գետափին կանգնածները դեռ  
չէին հասցրել ուշքի գալ, երբ Մելի նավակն արդեն  
անցավ առաջինից ու իր ետևում թողեց նրան:

— Շա՛ն որդի, այ քեզ սրիկա՛, — հայհոյեց  
Սկոթը և հեռագիտակը շարտեց քարերի վրա:

Նա այնքան էր զայրացած, որ շէր կարողանում  
մի բառ անգամ արտասանել: Մելը նրան հիմար  
դրույթյան մեջ էր գցել: Սկոթը գոռում էր բանվոր-  
ների վրա: Հետո ոտքով խփեց, մի կողմ նետեց  
ջարդված հեռագիտակը: — Շա՛ն որդի, սրիկա՛, —  
ամբողջ կոկորդով գոռում էր նա:

Երկու նավակն էլ կորան տեսողությունից: Մելի  
նավակը կես մղոն առջևից էր գնում:

Սկոթը բանվորներին կարգադրեց ճամբար վե-  
րադառնալ: Երբ բուրբ ցրվեցին, նա սկսեց դան-  
դաղ բարձրանալ բլուրը, գնալով դեպի ճամ-  
բար: Մել Անդերսոնը ճարակույթյամբ խարեց  
նրան:

Հաջորդ օրը Մելը տուն եկավ ու բաց արեց իր  
հյուղակի դուռը: Եունը պառկել էր սանդուղքի  
տակ: Մելի հոտն առնելով, արթնացավ: Մելը կրակ  
վառեց և սկսեց ուտելիք պատրաստել շան և իր  
համար:

Երբ նրանք կերան, Մելը վերցրեց բանջոն, ցա-  
խատնից դուրս հանեց ավտոմոբիլը և հրեց մինչև  
Փենքսթոթ պանդոկը: Սայնեն նստել էր մոտքի ճո-  
ճաթոռին: Երբ նա տեսավ Մելին իր ավտոմոբիլի  
հետ, պառկեց մեջքի վրա և ավելի արագ ճոճվեց:

Մելը ավտոմոբիլը հրեց մինչև հյուրանոց և  
կանգ առավ մոտքի մոտ: Բացեց դռնակն ու շան  
հետ նստեց մեքենայի մեջ: Փակեց դռնակը և  
վերցրեց բանջոն: Հետո սկսեց նվազել Սայնեի հա-

մար: Շունը կծկվեց ու քուն մտավ: Մելը ծընգ-  
ծընգացնում էր բանջոյի վրա:

Փլանեքի փլանեք... փլանեքի փլանեք... փլանե-  
քի պլինգ...

Սայնեն ճոճվում էր ու ժպտում Մելին, իսկ  
սա նստել էր ավտոմոբիլում և ուրախանում էր,  
որ քաղաք է վերադարձել:

Մելը ոտքերը գրեց առջևի նստարանին: Սայնեն  
շան համար ոսկոր քերեց, և Մելը բաց արեց դու-  
ռը: Շունը նետվեց դեպի ոսկորը, հետո ետ ցատ-  
կեց և սկսեց կրծոտել: Մելը փակեց ավտոմոբիլի  
դռնակն ու նորից վերցրեց բանջոն:

Փլանեքի փլանեք... փլանեքի փլանեք... փլանե-  
քի պլինգ...

Բանջոյի ձայնը կրկին հնչեց Փենքսթոթ պան-  
դոկի մուտքի մոտ և փողոցով տարածվեց հեռո՛ւ,  
հեռո՛ւ:

## ՏՂԱՄԱՐԳՆ ՈՒ ԿԻՆԸ

Արևածագի դժգույն լույսի տակ, խալար գի-  
շերից մնացած սովերների պես, նրանք զանդադ  
գնում էին ճանապարհով: Նրանց քայլվածքից  
շարժում չէր զգացվում, մինչդեռ ոտքերը փոշի  
էին բարձրացնում, որը հենց նույն պահին էլ  
նստում էր գետնին: Ու ամեն քայլափոխի նրանք  
նայում էին առաջ, թե արդյոք հորիզոնում չե՞ն  
երևա արեգակի առաջին կարմիր ճառագայթնե-  
րը:

Կինն ամուր կծում էր ներքևի շուրթը: Իսկ սա  
էր պատճառում, բայց նա միայն աչքպես կարող  
էր իրեն ստիպել առաջ գնալու, քայլ առ քայլ:  
Առանց գրան նա պարզապես ի վիճակի չէր լինի  
ոտքերը շարժել, մղոն առ մղոն: Նրբեմն նա հեծ-  
կլտում էր, բայց ոչ մի անգամ բարձրաձայն լաց  
չեղավ:

— Նորից հանգստանանք: — ասաց Ռիկար:

Նա շպատասխանեց:

Նրանք շարունակեցին քայլել:

Հաղթաճարեկով զառիվերը նրանք տեսան արևը: Երևում էր միայն նրա վերին մասը: Անտառաշուրկ հորիզոնը կարծես դանակի պես կտրել էր այն: Առջևում տարածվել էր հովիտը և ծածկվել մառախուղով, որը դանդաղ բարձրանում էր գետնից: Ինչ-որ տեղ երևում էին տներ ու ֆերմաներ, բայց գրեթե բոլորն էլ այնքան հեռու էին, որ հազիվ էին գծագրվում մառախուղի մեջ: Ամենամոտ տան ծխնելույզից ծուխ էր ելնում:

Ռուֆը նայեց իր ուղեկցին: Արեգակի կարմիր ճառագայթները կենդանացրել և կարծես արյամբ էին լցրել նրա դժգույն դեմքը: Բայց աչքերը հոգնած էին ու անկենդան: Թվում էր, որ նա մեծ ճիգով էր մնում ոտքերի վրա և ահա ուր-որ է կկորցնի հավասարակշռությունն ու կընկնի:

— Այս տանը մենք ուտելիք կխնդրենք, — ասաց կինը և երկար սպասեց, որ տղամարդն արձագանքի: — Այնտեղ մեզ կկերակրեն, — պատասխանեց կինը տղամարդու փոխարեն: — Անպայման:

Վառ կարմիր արեգակը սրընթաց բարձրացավ հորիզոնից: Գորշ ամպերի պատառիկները լողալով անցան և ծխի պես ծածկեցին արեգակը: Ու գրեթե նույնքան արագ, ինչպես ծագել էր, արևը սեղմվեց, դարձավ մի փոքրիկ հրեղեն կոճակ և հիմա այրում էր աչքերը: Ու արդեն հնարավոր չէր նայել նրան:

— Համենայն դեպս, կՓորձենք, — ասաց Ռուֆը:

Ռինգը կնոջը նայեց ցերեկվա պայծառ լույսի տակ, և նախորդ օրը մայր մտած արեգակից հետո առաջին անգամ տեսավ նրան: Կնոջ դեմքը դեռ դժգույն էր, այսերև ամբողջովին փոս էին ընկել:

Առանց որևէ բառ ասելու, տղամարդն սկսեց իջնել դեպի հովիտը: Նա ետ շղարձավ ստուգելու, թե կինն արդյոք հետևե՞լ է իրեն: Նա գնում էր ոտ գնում, ամեն քայլափոխի ոտքը պրկելով և ինչքան ներում էր ուժը, առաջ նետելով այն, այլապես արդեն չէր կարողանա շարժվել:

Կինը նրան հասավ միայն այն ժամանակ, երբ նա կանգ առավ տան դիմաց և սկսեց դիտել երկինք լողացող ծուխը:

— Ես կմտնեմ և կփորձեմ մի բան խնդրել, — ասաց կինը, — իսկ դու նստիր: Հանգստացիր:

Նա ուզում էր մի կերպ բաց անել բերանը և պատասխանել, բայց բառերը մնացին շորացած կոկորդում:

Նա գննում էր տունը. խարխուլած մուտք, պատուհանների վարագույրներ, ծխնելույզի ծուխ, ոտքանի նրա աչքերը տեսնում էին այս ամենը, նա իրեն օտար չէր զգում այս օտար վայրերում:

Ռուֆը բաց արեց դռնակը, բակ մտավ, պտտվեց տան շուրջը և կանգ առավ ետևի մուտքի մոտ: Նա ետ նայեց ու տեսավ, որ Ռինգը ևս բակ էր մտել:

Ինչ-որ մեկը վարագույրի արանքից հետևում էր նրանց:

— Բախիր, — ասաց Ռինգը:

Աչ ձեռքի կորացած մատները նա դրեց տան պատին և տախտակե դուռն այնքան ժամանակ բախեց, մինչև որ ցավեց ձեռքը:

Հետո արագ նայեց Ռինգին: Ռինգը գլխով արեց:

Խոհանոցի դուռը կիսով շափ բացվեց և երևաց կանացի մի գլուխ: Ոչ երիտասարդ մի կին, թխագեմ, ճակատին երկար ու լայն սպի՝ երևի ջարդուփշուր եղած ապակե ամանի հետքը:

— Հեռացե՛ք, — ասաց նա:

— Մենք ձեզ չենք անհանգստացնի, — հնարավորին շափ արագ ասաց Ռուֆը: — Մենք ուզում էինք միայն հարցնել, թե ձեզ մոտ ուտելու բան չի՞ գտնվի, գուցե կարտոֆիլ, գուցե հաց կամ ինչ-որ ուրիշ բան:

— Ես ինչ իմանամ, թե դուք ինչ եք անում այստեղ, — ասաց կինը: — Չեմ սիրում, երբ օտար մարդիկ են պատվում իմ տան շուրջը:

Այն է, նա ուզում էր փակել դուռը, բայց նույն պահին ավելի լայն բացեց, և դարձյալ երևաց կնոջ գլուխը:

— Ձեզ կկերակրե՛մ, — ի վերջո ասաց նա, — իսկ նրան ոչինչ չեմ կարող տալ: Միևնույն է, երկուսիդ չի բավականացնի:

Ռուֆն այնքան արագ շրջվեց, որ կրոնկները խրվեցին ավազի մեջ: Նա նայեց Ռինգին: Ռինգը նորից գլխով արեց:

Չնայած Ռուֆը լուռ էր, բայց նրա շրթունքների շարժումից Ռինգը հասկացավ, թե նա ինչ էր ուզում ասել:

Ռուֆը թափահարեց գլուխը:

Ռինգը մոտեցավ նրան:

— Ուրիշ տեղ կփորձենք, — ասաց Ռուֆը:

— Ոչ: Գնա և ինչ էլ որ տա, կեր: Իսկ ես կփորձեմ հաջորդ տանը:

Ռուֆը զեռ դանդաղում էր, շէր ուզում առանց նրան ներս մտնել: Տանտիրուհին բացել էր դուռը և սպասում էր, որ նա բարձրանա:

Ռինգը նստեց ծառի տակ դրված նստարանին:

— Ես կնստեմ, կսպասեմ, իսկ դու գնա կեր, — ասաց նա:

Ռուֆը դանդաղ բարձրացավ սանդուղքով և խոհանոց մտավ: Կինը ցույց տվեց սեղանի մոտ գտնվող աթոսը, և Ռուֆը նստեց:

Կինը սեղանին դրեց մի օր առաջ տապակված կարտոֆիլ և սառած բլիթներ, հետո մի բաժակ տաք սուրճ լցրեց ու դրեց պնակի կողքին:

Ռուֆն սկսեց հնարավորին շափ արագ ուտել, ումպ-ումպ խմելով տաք սուրճը և հազիվ ծամելով կարտոֆիլն ու հացը, իսկ թխագեմ կինը կանգնել էր դռան մոտ, որտեղից կարող էր մեկ Ռուֆին նստել, մեկ Ռինգին:

Ռուֆին երկու անգամ հաջողվեց բլիթի կտորներ խցկել վերնաշապկի տակ, իսկ կարտոֆիլի կեսը պահեց շրջազգեստի գրպանում: Կինը կաս-

կածանքով շափշփում էր նրան և միայն երբեմն-  
երբեմն նայում բազում սպասող Ռինգի կողմը:

— Հեռու՞ եք գնում, — հարցրեց կինը:

— Այո, — պատասխանեց Ռուֆը:

— Հեռվի՞ց եք գալիս:

— Այո:

— Իսկ ո՞վ է այդ մարդը:

— Ամուսինս, — ասաց Ռուֆը:

Կինը նորից բազ նայեց, հետո հայացքը հառեց  
Ռուֆին և մի քանի վայրկյան լռեց:

Ռուֆը փորձեց մնացած կարտոֆիլն էլ գրպանը  
խոթել, բայց հիմա տանտիրուհին ավելի ուշադիր  
էր հետևում նրան:

— Չեմ հավատում, որ ձեր ամուսինն է, —  
ասաց տանտիրուհին:

— Ձեր գործն է մի հավատացեք, բայց նա  
այնուամենայնիվ ամուսինս է, — պատասխանեց  
Ռուֆը:

— Այ թե լավ ամուսին է: Թույլ է տալիս տնից  
տուն ընկնել ու հաց մուրալ:

— Նա հիվանդ էր, — արագ ասաց Ռուֆը,  
գեմքը շրջելով տանտիրուհու կողմը: — Նախքան  
ճանապարհ ընկնելը, նա հինգ շաբաթ անկողնում  
էր պառկած:

— Այդ դեպքում տեղներդ նստեիք: Ինչու՞ եք  
թափառում: Ինչ է, նա ոչ մի գործ չի՞ ուղում անել,  
թե՞ ուղղակի չի սիրում աշխատել:

Ռուֆը վեր կացավ: Հացի կտորը ցած ընկավ  
նրա ձեռքից:

— Ենթահակարություն հյուրասիրության հա-  
մար, — ասաց նա: — Ես գնում եմ:

— Ես ձեզ խորհուրդ եմ տալիս, — ասաց կի-  
նը, — հենց որ հնարավոր լինի, բաժանվեք նրա-  
նից: Եթե նա չի ուղում աշխատել, ապա հիմարու-  
թյուն է ձեր կողմից...

— Նա աշխատանք ուներ, բայց տենդով վա-  
րակվեց:

— Չեմ հավատում: Գլուխս կկտրեմ, եթե այդ  
բոլորը չհնարեցիք:

Ռուֆը հասավ դռանը, բացեց ու դուրս եկավ:  
Հետո շրջվեց և նայեց կնոջը, որ կերակրել էր  
իրեն:

— Եթե նա հիվանդ էր, ինչպես դուք եք պատ-  
մում, — նրա ետևից դուրս գալով ասաց կինը, —  
ապա էլ ինչո՞ւ է թափառում, երբ ո՞չ դուք ուտելու  
բան ունեք, ո՞չ նա:

Ռուֆը նայեց Ռինգին, որ նստել էր ծառի տակ  
դրված նստարանին, ու չէր պատրաստվում պա-  
տասխանել, բայց խոսքերն ինքնաբերաբար դուրս  
եկան նրա բերանից:

— Մենք ճանապարհ ընկանք, որովհետև քրո-  
ջիցս նամակ ստացանք, թե մեր աղջիկը մահա-  
ցել է: Երբ ամուսինս հիվանդացավ, ես աղջկաս  
ուղարկեցի քրոջս մոտ: Իսկ հիմա գնում ենք նրա  
գերեզմանը տեսնելու:

Նա վազեց և հեռացավ նախամուտքից: Երբ հասավ տան անկյունը, Ռինգը վեր կացավ և հետեց նրան: Երկուսն էլ լուռ էին, բայց Ռուֆը շէր կարողանում զսպել իրեն և շնայել դեպի այն տունը, որտեղ բանալու անցքից նրանց էր հետևում կինը:

Տնից հարյուր քայլ հեռանալուց հետո Ռուֆը քանդեց շապկի կոճակները, հանեց հացի կտորները, որ նրան հաջողվել էր թաքցնել: Ռինգը առանց խոսքի վերցրեց: Երբ կերավ վերջացրեց, Ռուֆը նրան կարտոֆիլ տվեց: Նա ազահորեն ծամում և կուլ էր տալիս: Նա կնոջն էր հառել իր անխոս աչքերը, որոնք այնքան բան էին ասում Ռուֆին:

Մոտ կես ժամ լուռ քայլեցին, իսկ հետո Ռուֆն ասաց:

— Չար պառավ էր: Եթե ուտելու հարցը չլիներ, ես անմիջապես վեր կկենայի ու կհեռանայի:

Ռինգը երկար ժամանակ շարձադանքեց: Նրանք հովիտ իջան և սկսեցին բարձրանալ հանդիպակաց լանջը: Եվ միայն այստեղ Ռինգը խոսեց:

— Եթե իմանար, թե ուր ենք գնում, դժվար թե այդպես վերաբերվեր:

Ռուֆը հազիվ զսպեց հեկեկոցը:

— Ռինգ, դեռ ինչքա՞ն ենք զնալու:

— Երեսուն, բառասուն մղոն:

— Վաղը կհասնե՞նք:

Նա օրորեց գլուխը:

— Իսկ մյու՞ս օրը:

— Չգիտեմ:

— Եթե մեզ մեքենայով տանեին, այս երեկո կհասնեի՞նք, — հարցրեց նա, այլևս ուժ չունենալով զսպել հեկեկոցը, որ կրծում էր նրա սիրտը: — Այո՛, — ասաց նա, — եթե մեքենայով տանեին, մենք ավելի շուտ կհասնեի՞նք:

Նա հտ նայեց, բայց ոչինչ չէր երևում ճանապարհին: Այդ ժամանակ նա նորից հայացքը հանեց գետին, որի վրայով գնում էին իրենք, ու սկսեց հաշվել քայլերը. սկզբում մի ոտքով, հետո՝ մյուս:



ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տաք դեղ	8
Տոնավաճառ	19
Ավտոմոբիլը շարժիչ շունի	25
Տղամարդն ու կինը	35

ԷՐԱՖԻՆ ՔՈՂՈՒԵՅԻ  
ՏԱՔ ԳԵՏԸ

Խմբագիր՝ Լ. Մ. Կարապետյան  
Գեղ. խմբագիր՝ Մ. Բաղդասարյան  
Նկարիչ՝ Ա. Զախարյան  
Տեխ. խմբագիր՝ Կ. Սարգսյան  
Վերատպագրող սրբագրիչ՝ Ա. Հակոբյան

Պատվեր 1062

Տիրում 15 000

Հանձնված է արտադրության 8/VI 1962 թ.:  
Ստորագրված է տպագրության 4/IX 1962 թ.:  
Քուղի՝ 70×92<sup>1</sup>/<sub>32</sub> հրատ. 1,2 մամ.,  
տպ. 1,37 մամ. = 1,6 պայմ. մամ.:  
Գինը՝ 4 կոպ.

ՀՍՄՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների  
և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության  
№ 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65.